Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2017 թ.
դեկտեմբերի 26-ի N 1535- Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վ. Գաբրիելյան	- ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար (հանձնաժողովի նախագահ)
Ս. Կարայան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար (հանձնաժողովի նախագահի տեղակալ)
Զ. Ջեյթունցյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ
Գ. Գրիգորյան	- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ
Ա. Սամուելյան	- ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
Մ. Ապրեսյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
Վ. Կարապետյան	- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Խ. Հակոբյան	- ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Ա. Մինասյան	- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի խորհրդական
Օ. Ալավերդյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
Ա. Խզմալյան	- Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Կիրակոսյան	- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Տ. Ասողիկ քահանա Կարապետյան	- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների և արխիվի տնօրեն (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

17_1535

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2017 թ.
դեկտեմբերի 26-ի N 1535 - Ա
որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են զբոսաշրջության ոլորտին առնչվող, սակայն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի իրավասություններից դուրս հարցերի քննարկման նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

3. Հանձնաժողովի նպատակն է զբոսաշրջության ոլորտին առնչվող հարցերով պետական մարմինների աշխատանքների մեկտեղումը, զբոսաշրջության ոլորտին առնչվող, սակայն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի իրավասություններից դուրս հարցերի քննարկումը, լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումն ու ներկայացումն իրավասու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովը ղեկավարում և հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:

6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

8. Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

9. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Արձանագրությունը, որը ներառում է նիստի ընթացքում բարձրացված հարցերը և դրանց լուծման վերաբերյալ առաջարկները, ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կողմից:

10. Արձանագրությունն ուղարկվում է գործադիր իշխանության հանրապետական և տարածքային մարմիններին՝ ի կատարումն, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ արձանագրության մեջ նշված հարցերի լուծմանն ընթացք տալու առաջարկությամբ:

11. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են և հարցերը քննարկվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի առաջարկությամբ:

12. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն հարցերը ներկայացնում է

հանձնաժողովին մասնավոր հատվածից և այլ շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկությունների և նրանց հետ քննարկումների արդյունքում:

13. Հանձնաժողովի նիստի ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից քննարկվում է նախորդ նիստի արձանագրության մեջ տեղ գտած հարցերի կատարման ընթացքը, ներկայացվում են նոր հարցեր:

14. Հանձնաժողովի քարտուղարությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն է:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

15. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.

2) կազմակերպում և համակարգում է հանձնաժողովի աշխատանքները.

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերն ու գրությունները, հաստատում է հանձնաժողովի նիստերի օրակարգերը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

16. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) իր իրավասության սահմաններում ապահովում է հանձնաժողովի և հանձնաժողովում իր կողմից ներկայացվող կառույցի միջև ընդհանուր տեսլականի ձևավորումն ու արդյունավետ համագործակցությունը.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

17. Հանձնաժողովի քարտուղարությունը՝

1) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամների առաջարկությամբ, մասնավոր հատվածի հետ քննարկումների արդյունքում ձևավորում է հանձնաժողովի նիստի օրակարգը և ներկայացնում է այն հանձնաժողովի նախագահի հաստատմանը.

2) հանձնաժողովի անդամներին տրամադրում է հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգը և հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ու ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը.

3) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը, կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և դրանք ներկայացնում նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների ստորագրությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ